## ԱՇԽԱՏԱՆՔՆԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

| N/N | ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԹԵՐԹ |
|---|---|---|
| 1. | Ընդհանուր տեղեկություններ, քանդման աշխատանքներ | ՃՇ-1 |
| 2. | Գլխավոր հատակագիծ Մ 1:300 | ՃՇ-2 |
| 3. | Գլխավոր հատակագիծ Մ 1:500 | ՃՇ-3 |
| 4. | Գոյություն ունեցող շենք՝ լուսաբանող նկարներ՝1 | ՃՇ-4 |
| 5. | Գոյություն ունեցող շենք՝ լուսաբանող նկարներ՝ 2 | ՃՇ-5 |
| 6. | Հատակագիծ 0.00 նիշում Մ 1:100, սենյակների անվանացանկ | ՃՇ-6 |
| 7. | Գլխավոր ճակատ ըստ «Ա» առանցքի, ճակատ ըստ «Բ-Ա» արանցքի Մ 1:100 | ՃՇ-7 |
| 8. | Կտրվածք 1-1, ճակատ «Ա-Բ», դռան և պատուհանի ճաղավանդակ Մ 1:100 | ՃՇ-8 |
| 9. | Շինարարական աշխատանքների ծավալները | ՃՇ-9 |
| 10. | Հատակների իրականացման մասնագիր | ՃՇ-10 |
| 11. | Դռների, պատուհանների և վիտրաժի եսքիզները | ՃՇ-11 |
| 12. | Ճակատի ձևավորման հանգույց, թեքահարթակի հատակագիծ, արտաքին հարդարման և բարեկարգման աշխատանքները | ՃՇ-12 |
| 13. | Հատակ 0.00 նիշում /չափագրություն/ | ՃՇ-13 |
| 14. | Կետային հիմքերի հանգույց, կետային հիմքի ցանց, կտրվածքներ 1-1, 2-2, 3-3 | ՃՇ-14 |
| 15. | Գոյություն ունեցող պատի շրջափակում, դետալների տեսականի, ամրանի և բետոնի մասնագիր | ՃՇ-15 |
| 16. | Հիմքերի հատակագիծ՝ Մ 1:100, կտրվածք 1-1՝ Մ 1:25, ամրանի և բետոնի մասնագիր, դետալների տեսականի | ՃՇ-16 |
| 17. | Կտրվածք 2-2, ամրանի և բետոնի մասնագիր, հիմքերի ծավալները | ՃՇ-17 |
| 18. | Կտրվածքներ 5-5, 6-6, ծածկի հատակագիծ | ՃՇ-18 |
| 19. | Կտրվածքներ 1-1, 2-2, 3-3, 4-4, դետալների տեսականի | ՃՇ-19 |
| 20. | Կտրվածք 7-7, ամրանի և բետոնի մասնագիր | ՃՇ-20 |
| 21. | Պատի փռվածքն ըստ «Ա» առանցքի Մ 1:100, միաձույլ սյուն, բարավոր 1, 2, ցանցի ֆրոգմենտ, կտրվածքներ | ՃՇ-21 |
| 22. | Պատի փռվածքն ըստ «Բ» առանցքի Մ 1:100, Պատի փռվածքն ըստ «1, 2» առանցքների Մ 1:100, հանգույց - 1 | ՃՇ-22 |
| 23. | Շրջանակ ըստ «1,2,3,4,5» առանցքի՝ Մ 1:50, ամրանի և բետոնի մասնագիր | ՃՇ-23 |
| 24. | Հվ-1 - ի կտրվածք, դետալների տեսականի | ՃՇ-24 |
| 25. | Տանիքի ծածկույթի հատակագիծ՝ Մ 1:100, կտրվածք 1-1՝ Մ 1:50 | ՃՇ-25 |
| 26. | Տանիքի փայտամածի մոնտաժման հատակագիծ՝ Մ 1:100, հանգույցներ «C, D» | ՃՇ-26 |
| 27. | Հանգույց «A»՝ Մ 1:20, Հանգույց «B»՝ Մ 1:20 | ՃՇ-27 |
| 28. | Տանիքի ծածկույթի կառուցման ծավալները, տանիքի փայտե էլեմենտների մասնագիր, կտրվածք 2-2 | ՃՇ-28 |
| 29. | Միջնորմների ամրանավորման ֆրագմենտներ, կտրվածք 1-1 | ՃՇ-29 |
| 30. | Միջնորմային պատի հիմք, ցանց՝ Ց-2, կտրվածք 2-2, միջնորմների ծավալները | ՃՇ-30 |

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախագծում ըստ տրված առաջադրանքի գոյութուն ունեցող մեկ հարկանի կառույցի այն մասը, որը գրադարանի տարածքն է՝ քանդել և տեղում կառուցել նոր շենք: Գոյություն ունեցող կառույցը, կառուցվել է 1940-ական թվականներին, որը ծառայել է որպես կոլտնտեսության գրասենյակ և կինոյի տուն: Այն ունի ժապավենային բուտաքարից հիմքեր՝ կիր-ավազային շաղախով շաղկապված:

Պատերը «միդիս» սիստեմի շարվածքից են, նույնպես կիր-ավազային շաղախի կիրառմամբ: Ծածկը բաղդադի է: Տանիքը լանջավոր է, փայտե ծպեղային համակարգով, սև թիթեղից ծածկույթով: Ծածկի փայտե մարդակները և տանիքի ծպեղային համակարգը փտած են: Պատերն ունեն անթույլատրելի ուղղաձիգ և թեք ճաքեր: Հիմքերում նկատվում են վտանգավոր նստվածքային պրոցեսներ:

Վերը նշվածից հետեվում է, որ անհրաժեշտ է գոյություն ունեցող շենքի, գրադարանին պատկանող հատվածը քանդել և տեղում կառուցել նոր շենք:

Նոր կառուցվող շենքը մեկ հարկանի է, 23.0x6.80 մ. հատակագծային չափերով: Հիմքերը ե/բ ժապավենային են, պատերը ու/կ տուֆ քարից շարվածքով՝ ե/բ սյուներով, լայնական ու երկայնական ե/բ սեյսմիկ գոտիներով և հեծաններով: Ծածկը նախատեսված է ե/բ սնամեջ սալերից, տանիքը լանջավոր, փայտե ծպեղային համակարգով և մետաղե կղմինդրի ծածկույթով, արտաքին կազմակերպված ջրահեռացման համակարգով:

Շենքի կոնստրուկտիվ համակարգը նախագծված է համապատասխան գործող շինարարական նորմերի ու կանոնների:

Գլխավոր ճակատի ձևավորումը նախատեսված է իրականացնել պենոպորիստիրոլի ծածկույթի միջոցով:

Հիմքերի տեղադրումը նախատեսված է տեղանքի ինժեներա-երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա տրված եզրակացության:

Նախագիծը կատարված է հաշվի առնելով հետևյալ նորմատիվային փաստաթղթերի պահանջները՝

СНиП 2.01.07 - Բեռնվածքներ և ազդեցություններ
ՀՀՇՆ II-6.02 - 2006 - Սեյսմակայուն շինարարություն, նախագծման նորմեր
ՀՀՇՆ II-8.04.01 - 1997 - Շենքերի և կառուցվածքների հրդեհային անվտանգութուն
СНиП 2.02.01 - 1983 - Հիմքեր և հինատակեր
ՀՀՇՆ IV - 13.01 - 1996 - Քարե և ամրանաքարե կոնստրուկցիաներ
СНиП 2.03.01 - 1984 - բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ

## ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Քանդման աշխատանքները պետք է կատարվի ըստ էտապների, այնպես, որ համաձայն չափագրական հատակագծի՝ «Բ» առնցքով պատը պետք է պահպանվի, որը ունի L=20,35 և h=5,10 մետր:

Առաջին էտապում պետք է քանդվի տանիքը, ծածկը, «Ա» առանցքի պատը, «1» և «2» առանցքների և «Բ» առանցքների հատման կետում փորել՝ կետային երկու հիմք տեղադրելու համար: Խորությունը առկա հատակի նիշից՝ h=2.0 մ: Բետոնացնել կետային հիմքը համաձայն տրված գծագրերի, (նայել ԿՀ-1): Այնուհետև մոնոլիտ ե/բ սյուներ և մոնոլիտ գոտի կառուցել, շրջակալելով գոյություն ունեցող պատն ըստ «Բ» առանցքի:

Երկրորդ էտապում քանդել հիմքերը, մաքրել շինարարական աղբից և ձեռնամուխ լինել նոր կառույցի կառուցմանը:

Այս աշխատանքները կատարելիս պահպանել անվտանգության կանոնները շինարարական հրապարակում:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ ԵՔ- ՊԸԱՇՉԲ - 14/ 46-4 |
| | | | | | | Ք. ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ |
| Նախագծեց | Ս. Զուբով | | | | | ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱ - ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ |
| ՆԳՃ | Հ. Հովսեփյան | | | | | ՓՈՒԼ: ԱՆ · ԹԵՐԹ: ՃՇ - 1 · ԹԵՐԹԵՐ: 30 |
| | | | | | | ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ |
| | | | | | | «ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ |